ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Առլեն Մայիսի Շահվերդյանի «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ռազմավարական գնահատման համատեքստում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Արդի աշխարհում էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրն արդիական է և կարևոր տեղ է զբաղեցնում գլոբալ անվտանգային զարգացումներում, անվտանգության ապահովման հարացույցում, ինչպես նաև մարդկության և Երկիր մոլորակի կայուն ու անվտանգ զարգացման ներկա ու ապագա օրակարգերում: Այդ հիմնախնդրին տրվում են լայնաշերտ և խորաբովանդակ գնահատումներ տարբեր գիտությունների մակարդակներում, էկոլոգիական մարտահրավերներին արձագանքելու և դիմակայելու տարբեր գիտակարգային գործիքակազմերով: Այս համատեքստում ուշագրավ է էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի դիտարկումն ու ռազմավարական գնահատումը քաղաքագիտական մակարդակում, ինչպես նաև ռազմական ռազմավարական հետազոտությունների դիտակետից, ինչը զգալիորեն ընդարձակում է հիմնախնդրի ուսումնասիրության հորիզոնը:

Հենց քաղաքագիտական մակարդակում ռազմավարական գնահատումների շնորհիվ է հնարավոր դառնում համակողմանիորեն ու թիրախային կերպով բացահայտել և ուսումնասիրել էկոլոգիական անվտանգության խնդիրների ազդեցությունը քաղաքական գործընթացների ու ինստիտուտների, քաղաքական արտաքին ու ներքին զարգացումների վրա՝ քաղաքացի-հասարակություն-պետություն փոխհարաբերություններում, միջազգային քաղաքական գործընթացներում: Հատկանշական է, որ էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը, որն այսօր ընդգրկուն և բովանդակ հետազոտական տիրույթ է, ամբողջապես ու խորապես ընկալելի է դառնում, եթե այն դիտարկվում է հենց արդի քաղաքական, սոցիալական գործընթացներում, քանի որ էկոլոգիական խնդիրների հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքը և ընկալումները փոխվել են, ձեռք բերել ուրույն

առանձնահատկություններ: Այն խնդիրները, որոնք նախկինում ընկալվում էին ավանդաբար, այսօր առավել զգայուն են դարձել, և միջազգային հանրությունը ոչ միանշանակ կերպով է դրանց արձագանքում: Դա է փաստում նաև էկոլոգիական խնդիրների վերհանման և խաղաղ ու պատերազմական ժամանակ բնաոչնչացման միտումնավոր դրսևորումների միջազգային դատապարտմանը միտված իրավական գործընթացների լայն թափը բնաոչնչացման՝ էկոցիդի, քրեականացմանն ուղղված միջազգային հանրության ընդգծված մտադրությամբ, Հռոմի ստատուտում հնարավոր փոփոխություններով և այդպիսով՝ ընդհուպ մինչև միջազգային քրեական դատարանում բնաոչնչացումը որպես քրեորեն պատժելի գործողութուն ճանաչելու ու դատապարտելու քայլերով: Ինձ համար՝ որպես իրավական գործընթացներով և մարդու իրավունքներով երկար տարիներ զբաղվող հետազոտողի, այս գործընթացը ներկայացնում է առանձնակի արժեք և հետաքրքրություն:

Այս իմաստով Առլեն Մայիսի Շահվերդյանի «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ռազմավարական գնահատման համատեքստում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է առանձնակի արժեք, քանի որ աշխատանքում առկա առաջարկությունները նոր մակարդակի են բարձրացնում էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի լուծման ուղիները ինչպես միջազգային քաղաքական, իրավական գործընանթացներում, այնպես էլ ՀՀ ազգային անվտանգության ապահովման առումով: Ավելին, էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ռազմավարական գնահատման փորձերը հենց ՀՀ օրինակով, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների տիրույթում և Ղարաբաղյան հակամարտության վերլուծության համատեքստում, աշխատությանը տալիս են կարևոր և նորարարական նշանակություն: Նկատելի են հիմնախնդրի խորքային ուսումնասիրության մեջ հեղինակի ռազմական ռազմավարական բնագավառի ամբարած գիտելիքները, որոնք կիրառելով՝ փորձում է տալ նաև արծարծվող հարցերի պատասխանները հենց ռազմավարությանը և ռազմական ռազմավարությանը հատուկ օրինաչափությունների, ինչպես նաև արդի պատերազմավարության բնույթի որոշման մեխանիզմների օգտագործմամբ: Այս իմաստով առանձնահատուկ կերպով կարևորում եմ ատենախոսության մեջ զգալի անդրադարձը նաև ռազմական էկոլոգիային:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Հեղինակի ատենախոսության նպատակն է. «վեր հանել էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նշանակությունն ու ընդգծել կարևորությունը քաղաքագիտական և ռազմավարական առումներով, ներպետական ու միջպետական քաղաքական-անվտանգային գործընթացներում և ժամանակակից պատերազմներում, միևնույն ժամանակ՝ դիտարկելով բնահամակարգի միտումնավոր ոչնչացման դատապարտման միջազգային գործընթացների արդյունքները՝ որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում հակառակորդի նկատմամբ գերակայություն ապահովող բանակցային գործիք և ՀՀ անվտանգային շահերի ապահովման նոր ու արդյունավետ ռազմավարական ուղղություն»: Այս իմաստով հատկանշական եմ համարում այն, որ Ղարաբաղյան հակամարտության ուսումնասիրության համատեքստ էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի տեղափոխումը, գնահատումն ու ռազմավարական վերլուծությունը, ինչպես նաև դրա դիտարկումը Հայաստան-Ադրբեջան ներկա և ապագա հարաբերությունների առումով, զգալիորեն մեծացնում է ատենախոսության կիրառական նշանակությունը պետական մարմինների ու քաղաքական գործիչների համար: Ատենախոսության առաջադրված նպատակի իրականացման համար հեղինակի կողմից ընդգծվել են համապատասխան խնդիրներ, որոնք արտացոլում են աշխատանքի անելիքները:

Ատենախոսության գիտական նորույթը: Առանձնահատուկ է նաև ատենախոսության գիտական նորույթը, քանի որ այն շահեկանորեն ընդգծված է, և նկատվում է հեղինակի երկարամյա հետազոտությունների արդյունքում ծագած ու զարգացած մտահղացումների, գաղափարների հիմնավոր մարմնացումը: Ատենախոսության մեջ համակողմանիորեն վերլուծվել է արտաքին ու ներքին քաղաքական, իրավական, սոցիալական գործընթացներում էկոլոգիական անվտանգության դերն ու նշանակությունը, մեծ կարևորություն է տրվել ազգային անվանգության համակարգում էկոլոգիական անվտանգության՝ որպես կենսականորեն կարևոր բաղադրիչի, վերհանմանն ու էկոլոգիական արդի մարտահրավերներին դիմագրավելու հրամայականին:

Ինձ համար, որպես սոցիալական պաշտպանությանն ուղղակիորեն առնչվող մարդու, առանձնակի հետաքրքիր է այն, որ ատենախոսության մեջ ուրույն

անդրադարձ կա ինչպես սոցիալական էկոլոգիային՝ պայմանավորված քաղաքացիական հասարակության կայացման և օրենսդրական դաշտի գործունեության որակով ու զարգացման դինամիկայով, այնպես էլ մարդ-բնություն և մարդ-հասարակություն հարաբերությունների տիրույթներում էկոլոգիայի և էկոլոգիական անվտանգության հասկացությունների ընդլայնմանը, դրանց նորովի իմաստավորմանն ու կարևորմանը:

Շարունակելով ատենախոսության գիտական նորույթի արժևորումը՝ նշեմ, որ ատենախոսության մեջ հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում երկու նոր տերմին՝ «սոցիալացանցային էկոլոգիա» և «սոցիալացանցային էկոլոգիական անվտանգություն»: Առիթ ունեցել եմ այդ մասին ընթերցելու նրա ընդարձակ գիտական հոդվածը ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսում և կարծում եմ, որ այս տերմինների հետագա շրջանառումը և առաջ քաշված գաղափարների խորացումն ու զարգացումը հետազոտական նոր նյութ են տարբեր ոլորտի հետազոտողների համար՝ տեղեկատվականից մինչև իրավական:

Ատենախոսության արդյունքների գիտական ու գործնական նշանակությունը: Ատենախոսությունն աչքի է ընկնում տեսական և գործնական նշանակությամբ և, ինչպես ընդգծեցի, այն կարող է օգտակար նյութ հանդիսանալ պետական մարմինների, մասնավորապես՝ ՀՀ ԱԳՆ-ի, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ ՊՆ-ի, ՀՀ ԿԳՄՍՆ-ի, ՀՀ ԱՆ-ի, ՀՀ ՆԳՆ-ի համար: Քանի որ ատենախոսության մեջ էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը դիտարկվում է նաև միջազգային և մարդու իրավունքների համատեքստում, ապա աշխատանքը կարող է հետաքրքիր լինել նաև ՀՀ Մարդու իրավունքների գրասենյակի համար:

Աշխատանքի կառուցվածքը, ծավալը, հիմնական դրույթներն արտացոլող հոդվածները: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երկու գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 177 էջ է: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հեղինակի իննը գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Դիտողություններ: Քննարկվող ատենախոսության վերաբերյալ առկա են հետևյալ դիտողությունները՝

1. Աշխատանքն էականորեն կշահեր, եթե ներածության մեջ գիտավարկածից զատ հստակորեն ձևակերպված լինեին նաև առաջադրվող դրույթներ, ենթավարկածներ, որոնց վերաբերյալ հեղինակի կողմից՝ որպես կարևոր գաղափարներ, ուսումնասիրվել, վերլուծվել ու հիմնավորվել են ողջ հետազոտական աշխատանքի ընթացքում և ներկայացվել են բազմակի եզրակացությունների, էկոլոգիական անվտանգությանն ուղղված արժեքավոր առաջարկությունների ձևով:

2. Եզրակացությունները կարելի էր ներկայացնել առավել հակիրճ և կոնկրետ՝ որպես իրականացրած գիտական հետազոտական աշխատանքի եզրահանգումներ՝ առանց ծավալուն նախաբացատրական համատեքստերի, ենթատեքստերի և մեկնաբանությունների, քանի որ դրանք արդեն իսկ հանգամանորեն վերլուծված, հիմնավորված և ներկայացված են համապատասխան ենթագլուխներում:

3. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական, քերականական սխալներ և վրիպակներ (ինչպես օրինակ՝ բաց թողնված տառեր հետևյալ էջերում՝ 58, 91, 106, 109, 110, 125, էջ 145 վ" 4-րդ տ" «Այսինքն՝""""» նախադասության միտքն ավարտված չէ):

4. Տեքստում հղման աղբյուրները հիմնականում ներկայացված են միևնույն էջի վրա, որի արդյունքում հաճախ մեջբերման աղբյուրներն ավելի մեծ ծավալ են զբաղեցնում, քան՝ հիմնական տեքստը (օրինակ՝ էջ 71): Քանի որ գրականության ցանկում ներառված են հետազոտության բոլոր աղբյուրները, ուստի ավելի նպատակահարմար կլիներ հղումները ներկայացնել ըստ գրականության ցանկի համարի:

Նշված դիտողությունները սակայն չեն նսեմացնում ատենախոսության գիտական և տեսագործնական նշանակությունը:

Եզրակացություն: Աշխատանքի արդյունքները նոր են, ունեն ուրույն արժեք և ցանկալի է, որ հեղինակը շարունակի թեմայի ուսումնասիրումը ռազմավարական և քաղաքագիտական տեսանկյունից՝ դրանով հարստացնելով հայրենական քաղաքագիտական միտքը:

Այսպիսով՝ Առլեն Մայիսի Շահվերդյանի «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ռազմավարական գնահատման համատեքստում (<< օրինակով)»

թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է ամբողջական գիտական աշխատանք, որը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների նկատմամբ ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի
Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
բ.գ.թ., դոցենտ **Ա. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Ա. Ռ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ. **Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«05», «12», 2023 թ.